

2699

ЛИСТОКЪ № 12

ԲԱՆԵՐԱՅՐ ՄԱՍԻՆ

Բարձր. և Երկր. Վարդապետ

О ХОЛЕРѢ

Составлено по брошюрѣ
д-ра С. И. Сычугова.

Переведенъ (свободно) съ русскаго на армянскій по
предложенію Земс. вр. И. КРЫМА

Наст. Ст. Крым. Арм. Мон.
АРХМАНДРИТОМЪ НЕРСЕСОМЪ.

14229

БАКУ

Типографія А. Н. Тараева и Л. Д. Мирзаянцъ

1911

ԽՈՒՆԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ
(Օ խՈՒՆԵՐԻ)

14729
Խոլերան դրսից բերուած մի հիւանդութիւն է, նա մեզ մօտ՝ Ռուսաստանում գոյութիւն չունի, այլ միայն երբեմն-երբեմն գալիս է մեր երկիրը Ասիայից, դրա համար էլ կոչուում է ասիական: Մեր երկրում առաջին անգամ խոլերան երևաց 1823 թուին: Դրանից յետոյ արդէն շատ անգամ Ռուսաստանում երևաց խոլերան, և շատ թանգ նստեց մեզ վրա, ամենաքիչը երկու միլիօն մարդ տարաւ նա գերեզման:

Այդքան շատ մարդկանց մահ է պատճառում խոլերան նրա համար, որովհետեւ վարակիչ հիւանդութիւն է: Բաւական է որ մի մարդ նրանով հիւանդանայ, եթէ հարեանները չզգուշանան, նրանից կարող են շատ մարդիկ վարակուել—հիւանդանալ: Եթէ հիւանդներին կըայցելեն, տեսութեան կգան իր ծանօթները և բարեկամները, նրանք կարող են հիւանդանալ և վարակել նրանով իրանց ընտանիքի մարդկանց և հարեաններին: Այդ ձևով էլ խոլերա հիւանդութիւնը տարածւում է տնից առն, գիւղից գիւղ: Խոլերան այսպէս է տարած-

ւում, ինչպէս օր. ծաղիկը, կարմրուկը, կայն կայն:

Խոլերան տարածւում է խոլերա ընկած մարդկանց միջոցով, նրանց արտաթորութիւններով (քաք) և իրերով, օր. շորերի, սպիտակեղէնի միջոցով:

Հիւանդութիւնը այսպէս է տարածւում. խոլերա ընկած մարդու արտաթորութիւնների (քաքի) և բերանից փսխածի (եռ եկած) միջոցով ցաւը (ախտը) ընկնում է հողի վրայ գետինը, եթէ հողը թաց է, (ցաւը) ախտը տարածւում է հողի մէջ և ընկնում է մօտիկ գտնուած գետերի, լճերի և հորերի ջրերի մէջ, այդ ջրերը մարդիկ խմելով, խմում են և այն ախտի մասերը, որոնք խոլերա հիւանդութիւն ունին իրանց մէջ: Աւելի շատ ախտը տարածւում է այն հողի մէջ, որը լիքն է կեխտոտ բաներով, մարդու արտաթորութիւնով, աղբով և զանազան փթած առարկաներով: Բայց կարող է պատահել, որ գետերի և լճերի ջրերի մէջ խոլերա հիւանդութիւն կ'մտնի ոչ թէ հողի միջոցով, այլ ուղղակի ուրիշ ճանապարհով: Այդ լինում է այն ժամանակ, երբ խոլերայով բռնուած մարդկանց կեխտոտ սպիտակեղէնը առանց առաջուց ախտահան անելու, բերում և այդ գետերի մէջ լուանում են, լուանալով ախտը տարածում են այդ ջրերի մէջ: Շատ անգամ և հէնց ճանճերը գալիս նստում են կերակրի,

հացի վրայ, որը մենք ուտում ենք, և իրանց հետ բերում են հիւանդութիւնը, որ եղել է կեխտոտութիւնների մէջ, որոնց վրայ առաջուց ճանճերը նստել են, այսպիսով ճանճերի միջոցով խոլերան տարածւում է:

Մարդը խոլերա է ընկնում կերակրի և խմելիքի միջոցով:

Խոլերան տարուայ մէջ շատ տարածւում է ամառը և աշունը:

Նկատուած է, որ բոլոր մարդիկ խոլերայով չեն հիւանդանում: Աղքատները, որոնք վատ են սպրում, լաւ չեն կերակրւում, աւելի շատ են խոլերայով հիւանդանում, քան թէ հարուստները: Շատ անգամ հիւանդանում են այն մարդիկ, որոնք զեղիս կեանք են վարում, որոնք շատակեր են, որոնք չհասած պտուղներ և բանջարեղէն են գործածում կերակրի մէջ: Խոլերան տարածւում է այն տեղերում, որտեղ փողոցները, հրապարակները, բակերը, լճերը և հորերը կեխտոտ են, մաքուր չեն:

Կան մարդիկ, որ խոլերայով հիւանդացած ժամանակ թեթեւ են պրծնում, կան մարդիկ որ դժուարութեամբ են տանում, ինչպէս և ուրիշ հիւանդութիւնների ժամանակ:

Եթէ հիւանդութիւնը թեթեւ է այդ ժամանակ առաջանում է փրբուծ, որ սովորական փորլուծի նման է, որ ամեն մարդու էլ կ'լինի: Այդ ժամանակ արտաթորութիւնը (քաքը) լի-

նում է շատ անգամ և աւելի ջրալի, քան թէ առողջ մարդուն: Փորլուծը մի փնասակար հիւանդութիւնն է, բայց խոլերայի ժամանակ թողնել առանց ուշադրութեան չի կարելի, պէտք է բժշկել: Թէև այդ փորլուծը կարող է ինքն իրան անցնել, բայց շատ անգամ պատահում է որ ծանրանում է, փոխում է ուրիշ հիւանդութեան: Այդ փորլուծի փնասն էլ այն է, որ դրանով բռնուած հիւանդները շարունակում են աշխատել, ման գալ, շրջել և դրանով խոլերան տարածում են ամեն տեղ:

Աւելի դժուար հիւանդութեան ձևը կոչւում է խոլերինա, որի ժամանակ հիւանդը բացի փորլուծից, ունենում է և փսխումը (սրտի թափումը) և ջղաձգութիւններ և ոտքերի ջղերի քաշումը՝ կծկծկումը: Այս հիւանդութիւնը քաշում է մի քանի ժամ կամ մի օր, և յետոյ, կամ անցնում է և հիւանդը առողջանում է, և կամ ստանում է ծանր կերպարանք որ կոչւում է սառը, սպանող խոլերա: Այսպիսի ծանր խոլերան երբեմն սկսւում է փորլուծից յետոյ, կամ խոլերինայից յետոյ, շատ անգամ էլ սկսւում է միանգամից: Սովորաբար այսպէս է լինում. գիշերը կամ առաւօտը շուտ հիւանդը դուրս է գնում մեծ արտաթորութեամբ, յետոյ սկսւում է խիստ փորլուծ և փսխում, որոնք կրկնւում են մի ժամում մի քանի անգամ, արտաթորածը լինում է սպիտակած, ջրալի,

կաթնամածուների նման և առանց հոտի, դրանց մէջ լինում են սպիտակ պղպճակներ, այդպիսի տեսք ունի և փսխածը (սրտի թափածը): Ոտքերը սկսում են կուչ գալ, որ լինում է այնքան տանջող, որ համբերատար մարդն էլ սկսւում է կանչել և բղաւել: Մի քանի ժամում հիւանդը բոլորովին փոխւում է, աչքերը խոր են ընկնում, քիթը սրւում է, բոլոր մարմինը նիհարանում է (լղարում է), կաշին կապտում է և սառչում է, միզելը բոլորովին կտրւում է: Հիւանդը շատ ծարաւում է, բայց ծարաւը յագեցնել չի լինում. ինչ որ խմում են, էլի յետ է գալիս բերանից. այսպէս շարունակւում է մի քանի ժամ մինչև մի օր և երբեմն էլ շատ: Առհասարակ այսպիսի հիւանդների կէսը մեռնում են: Իսկ նրանք, որոնք առողջանում են, նրանց փսխումը և փորլուծը վերջանում է, մարմինը տաքանում է, և կապոյտ գոյնը անցնում է:

Շատ անգամ պատահում է, որ խոլերան բերում է խիստ տաքութիւն՝ ջերմութիւն գրլ-խացաւով, երեսի կարմրութեամբ և զառացանքներով (գլխից դէլ տալ). այս դէպքում առողջանալը շատ դժուար է լինում:

Մարդ լինչ պէտք է անի որ իրան էլ, իրա ընտանիքն էլ պահպանի խոլերայի վարակումից:

Ամենից լաւն այն է, որ մարդ թոյլ չտայ,

որ խոլերան մտնի իր քաղաքը կամ գիւղը. բայց այդ անհնարին է առայժմ մեզ համար: Պէտք է այն ժամանակ մարդ տանից դուրս չգալ, առևտուր չանի, բոլոր մարդիկ գրկուեն աշխատանքից ելան: Բայց եթէ հնար չկայ խոլերայի առաջն առնել, կարելի է նրա տարածումը քիչացնել: Դրա համար հարկաւոր է հետևեալը կատարել:

Պէտք է միշտ մաքուր պահել հրապարակները, բակերը և փողոցները. չէ՞ որ խոլերան տարածւում է կեխոտոտ ջրի և հողի մէջ: Առանձնապէս պէտք է խիստ մաքրատէր լինել երբ խոլերան ընկել է (սկսել է): Եթէ բոլոր աղբը դուրս հանելը դժուար է, գոնէ դռները, լուսամուտները պէտք է անպատճառ մաքրել այդ աղբից:

Պէտք է մաքուր պահել լճակները, գետակները և հորերը, որոնցից ջուր են խմում: Որպէսզի կեխոտոտութիւնները չծծուեն հորի մէջ, պէտք է հորի շորս կողմ ծածկել կաւով և լաւ զարնել—պնդացնել կաւը: Եթէ ջուրը գետակից են վերցնում խմելու համար, պէտք չէ որ գետակում լուացք անել, կանեֆ թրջել և աղբ ածել ջրի մէջ:

Պէտք է մաքուր պահել բնակարանները, նայել որ պատերի և յատակների վրայ կեխոտութիւն չփողովուի: Պէտք է ոչնչացնել թախթաբիթին, լուռն, առանձնապէս ճանճերը և սար-

դերը, որովհետև դրանք կարող են հիւանդութիւնը տարածել մէկ տեղից միւս տեղ: Տների օդը միշտ պէտք է մաքրել, ամառը պատուհանները բանալով, ձմեռը վառարանի խողովակները: Խան, ճաշարան (խարչկնիս) պահողները պիտի խիստ հոգան մաքրութեան վրա, որովհետև շատ անգամ սրանցից է խոլերան տարածւում հարևան տները և գիւղերը:

Մարդ պէտք է իրան մարմինը մաքուր պահէ. բաղնիս պիտի գնայ, իսկ ամառը բացի դրանից և լողանայ:

Այս կանոնները միշտ պէտք է պահել, կըլինի խոլերայ, թէ չէ, միևնոյն է: Այս անհրաժեշտ է իրան ազատ պահելու համար, թէ վարակիչ թէ ոչ վարակիչ հիւանդութիւններից. առանց խոլերայի էլ մեր երկրում շատ մարդ է մեռնում քան ուրիշ երկրներում:

Եթէ խոլերան մեզ մօտ երևայ, կամ մեր հարևան տներում և գիւղերում, այն ժամանակ պէտք է աշխատել հեռու մնալ նրանցից. առանց շատ կարևոր հարկաւորութեան նրանց մօտ չպէտք է գնալ, մասնաւորապէս այն տները, որտեղ խոլերայով հիւանդ կայ, և վարակուած գիւղերի և տների մարդկանց պէտք է աշխատել չթողնել իրանց տները մօտել. եթէ հարկաւոր է նրանց հետ տեսնուել, աւելի լաւ է խօսակցել նրանց հետ փողոցներում և ոչ տներում: Այն տներից, որտեղ հիւանդ կայ,

պէտք է բանման չվերցնել նրանց տանից, թէ չէ նրանց իրերի հետ կարելի է խօլերան բերել ուրիշ տներ: Շատ անգամ տեսնուել է, որ աղքատ շրջիկ մարդիկ մէկ գիւղից միւսը գրնալիս իրանց հետ տարել են խօլերա, ծաղիկ, կարմրուկ հիւանդութիւնները:

Լաւ կլինէր որ գիւղերում լինէին առանձին տներ, որտեղ ընդունէին աղքատներ և շրջիկներ և խնամուէին: Քանի որ այժմ գիւղերի մէջ այդպիսի աղքատանոցներ չկան, լաւ կլինէր որ այդպիսի աղքատներին ողորմութիւն տալին փողոցների մէջ և եթէ խօլերոտ տեղից են գալիս, տուն չընդունէին և խնդրէին որ ողորմութիւն ժողովեն և գնան գիւղից: Խօլերան տարածւում է ամառ ժամանակ խիստ կերպով, այնպէս որ եթէ ամառները այդպիսի շրջիկ աղքատները կգան գիւղը, նրանց կարելի է ոչ տանը քնացնել, այլ դրսումը, բակի մէջ, կամ մի տեղում, ուր մարդ չի ապրում:

Հարկաւոր չէ հարբեցողութիւն անել, հարկաւոր չէ չափից դուրս աշխատելով յոգնել, հարկաւոր չէ անքուն գիշերներ անցկացնել:

Խմելու համար պէտք է գործածել միմիայն եռացրած (եփած) ջուր և յետոյ սառցրած (հովացրած):

Թէյը (չայը) նոյնպէս լաւ խմիչք է: Կվա-

սը չարժէ խմել, մանաւանդ եթէ սառն է, կամ հին կամ նորը չպէտք է խմել: Պէտք է զգոյշ կենալ և չխմել հում կամ սառն կաթը. պէտք է միշտ եփել: Պէտք չէ այնքան ուտել որ փորը տռզի: Պէտք չէ գործածել պտուղներ, սունկ, կաղամբ, (կապուստա), սիսեռ (գօրօխ), ծմերուկ և խնձոր, մանաւանդ եթէ նրանք խակ են, հասած չեն:

Պէտք է տաք պահել փորը և ոտքերը: Ամենևին չի կարելի պառկել գետնի վրայ առանց դօշակի, այն էլ փորի վրայ:

Եթէ մէկը հիւանդանայ խօլերայով, պէտք է տանել հիւանդանոց: Եթէ հիւանդին հիւանդանոց չտանեն իսկոյն և եթէ, կարող է հիւանդը մեռնի, կամ թէ ուրիշ մարդիկներին էլ հիւանդացնի, վարակի, որովհետեւ եթէ հիւանդների թիւը շատանայ, այն ժամանակ շատ դժուար կլինի նրա առաջը առնել: Ոչ ոք չպիտի ասի թէ բժշկի ետեից գնալու հերթը իմը չէ, ամեն մարդ, ով ձի ունի, պէտք է վերցնի հիւանդին և տանի հիւանդանոց, որ հիւանդը չմնայ տանը և ուրիշներին էլ հիւանդացնի: — Մինչև բժշկի կամ ֆէլդշէլի գալը պէտք է հիւանդին պարկեցնել անկողնի մէջ. դօշակի տեղ յարմար է դարձան (սօլօմա) փռել և դարձանի վրայ դնել հիւանդին, որ յետոյ դարձանը այրել, դարձանը լինի կեխտոտած թէ մաքուր, պէտք է կրակի տալ: Տանը շատ մարդ թողնել

հիւանդի մօտ հարկաւոր չէ, պէտք է մէկ երկու հոգի մնան որ հիւանդին նայեն. միւս տընեցիք պիտի փոխուեն ուրիշ սենեակ, կամ տեղ, խոլոր ուտելու բաները և ուրիշ իրերը պէտք է տանից դուրս հանել: Հիւանդի տանը չպէտք է ուտել. իսկ ով հիւանդին կնայէ, նա պէտք է իրան շատ մաքուր պահէ, շորերը թէ ձեռները լուանայ տաք ջրով և սապոնով. որովհետև հիւանդի բերանից դուրս եկած փրսխածից կարող է ընկնել հիւանդապահ մարդկանց շորերի, ձեռքերի վրայ:

Հիւանդի տանը օդը պէտք է միշտ մաքրել՝ դուռը կամ լուսամուտը բանալով. կարելի է թեթիկ կերպով վառել վառարանը, որի խողովակովը վատ օդը դուրս կգայ:

Հիւանդի արտաթորածը (քաքը) և բերանից դուրս փսխածը չի կարելի թափել բակի մէջ, թէ չէ միւսներին էլ կհիւանդացնի, այլ պէտք է ածել կամ մեծ փոսի մէջ և ծածկել մոխրով (գօլա) կամ թափել մի ամանի մէջ (գօրշօկ) և մոխրով ծածկել, էլ ուրիշ տեղ թափել փսխածը չի կարելի. այնուհետև ամանի մէջ կարելի է բացի մոխրից, թափել դեօկտ (կամ կիր) և յետոյ տանել թափել մեծ փոսի մէջ և այնուհետև այդ փոսը լցնել հողով. կամ ամանի մէջ կարելի է լցնել փայտի փշրանք, և վրան թափել փսխածը և արտաթորածը և այլերէլ—կրակի բռնել:

Չի կարելի հիւանդի շորերը, սպիտակեղէնը լուանալ գետակների, լճակների կամ հորերի ջրերի մէջ. ամենից լաւն է նրա շորերը դնել ամանի մէջ և լցնել պինդ եփ եկած ջրով, քամել, մրգել և չորացնել. իսկ երբ բժիշկը կհասնի, նա այնպիսի դեղ կտայ որ բոլորովին շորերը ախտահան անի կամ նա խորհուրդ կտայ ինչպէս վարուել հիւանդի շորերի հետ:

Մինչև բժիշկի գալը պէտք է հիւանդին այսպէս օգնել. հիւանդի փորի վրա պէտք է դնել տաք չոր շորեր մէջը լիքը վարսակ (օվեօս) կամ մոխիր (գօլա) տաք-տաք:

Հիւանդը եթէ ծարաւ լինի, պէտք է տալ մետանի կամ կակղու (լիպա) կաթիլներ խմելու կամ չայ, կամ եփած ջուր: Պէտք է հիւանդին տալ խմելու քիչ-քիչ և շատ անգամ, բայց մեծ բաժակով միանգամից խմել չի կարելի: Բերանից փսխած ժամանակ լաւ կլինի տալ սառուցի կտորներ, փոքրիկ չափով կուլ տալու համար: Եթէ մարմինը կսառչի և ոտքերը կուչ կածի, կքաշի իրան, այն ժամանակ պէտք է բրդի (կամ քաթանի) շորով քսել, շփել ձեռքով կամ արագի հետ կամ չոր-չոր—մինչև որ տաքանայ մարմինը. մարմինը էլի կարելի է տաքացնել տաք-տաք վարսակով (օվեօս), մոխրով կամ տաք աւազով տոպրակի մէջ լցրած և փորի կամ մարմնի վրայ դրած:


Եթէ հիւանդը լաւ կզգայ իրան և կկամե-

նայ ուտել, լաւ է նրան տալ թեթեւ կերակուր,
վարսակից խաշած ճաշ, կիսէլ, եփած կաթ և
այն էլ քիչ-քիչ:

Յետոյ այդպէս լաւացնող հիւանդին ինչ
պիտի տալ ուտելու, բժիշկը ինքը կասէ. նա
կպատմէ թէ ինչպէս պէտք է հիւանդութեան
վերջ տալ և շորերը փափաճան անել:

Շուտ պիտի բժիշկ կանչել, կամ եթէ դժ-
ւար կլինի, շուտով ֆէլդշերին ձայն տալ որ
գայ հիւանդի մօտ:

Ով որ կկամենայ խոլերայի մասին աւելի
մեծ ծանօթութիւններ ստանայ, թէ ինչպէս
ապահովել իրան խոլերայից, կարող է հետեւալ
գրքերը կարդալ. բժիշկ Պօմբրակի՝ „О зараз-
ныхъ или прилипчивыхъ болѣзняхъ“, և բժիշկ
Պօպովի „О холерѣ и мѣрахъ предохраненія
отъ нея“.



Մ Յայագիտական գրադարան



MAL014736

